ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երվանդաշատի միջնակարգ դպրոց»

5-6-րդ դասարան

Մխիթարյան Սոնա Արմենի

«2022-2023» ուստարի

Digitally signed by GASPARYAN LUSINE 7809730103
Date: 2022.10.03 19:35:11 AMT

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** (դասարանի ընդհանուր բնութագիրը) – Դասարանում սովորում են 12 աշակերտ (5-6-րդ)՝ 5 աղջիկ, 7 տղա։ Բոլորն էլ ընկերասեր, կարգապահ, հետաքրքրասեր աշակերտներ են։ Ունեն մեծ պատասխանատվություն ընկերների առողջության համար, պահպանում են սանիտարահիգենիկ պահանջները։ Օգնում են միմյանց, հետ մնացող (ուսման մեջ) աշակերտներին ձեռք են մեկնում, հետևում հաջողության հասնելու համար։

## 2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ-

1. Անցկացնել զրույցներ օրվա ռեժիմի, աշակերտների իրավունքների և պարտականությունների մասին։
2. Աշակերտների գիտակցությունը հասցնել այն, որ գիտեկիքը կարևոր նշանակություն ունի մարդու կյանքում։
3. Անցկացնել զրույցներ միմյանց օգնելու, կիրթ և հարգալից վերաբերմունք ունենալու կարևորության մասին։
4. Փոխանցել ազգային արժեքների կարևորությունն ու նշանակությունը, հասցնել այն մակարդակին, որ նրանք գիտակցեն իրենց նշանակությունը ազգայինի պահպանման համար։
5. Ժամանակին հրավիրել դասարանական ժողովներ, քննարկել դասարանի կարգապահությանն ու ուսման որակին վերաբերող հարցեր։

### 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն- Աշակերտներին գաղափար տալ մեր եկեղեցու, կրոնի նշանակության մասին։ Մեր առաջացնել հոգևոր արժեքների նկատմամբ։ Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է արժեքային համակարգի ձևաորման գործում։

3.2 Գեղագիտական դաստիարակություն- Աշակերտների մեջ արթնացնել սեր դեպի արվեստը, գրականությունը։ Այցելել թանգարաններ կազմակերպել ներկայացումներ և կինոդիտումներ, սովորեցնել կարդալ գեղանկար։ Կազմակերպել զրույցներ և բանավեճեր. <<Գեղեցիկն իմ պատկերացմամբ>>։

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն- Արցախի գոյամարտի, ազգային ազատագրական շարժման, քառօրյա և 44-օրյա պատերազմների մասին զրույց անցկացնել: Հանձնարարել <<Նամակ հայրենիքիս պաշտպանին>> թեմայով շարադրություն: Հայրենասիրական վառ դրսևորումները հաղորդել սովորողներին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Զրույցների միջոցով կարևորել ֆիզիկական դաստիարակության նշանակությունը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում: Ապահովել աշակերտների մասնակցությունը ֆիզկուլտուրայի դասերին, զրույցներ վարել <<Առողջ ապրելակերպ>> թեմայով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն- Աշակերտների մեջ դաստիարակել աշխատասիրություն, բացատրել աշխատանքի դերը բարեկեցիկ կյանք ապահովելու ուղղությամբ: Անցկացնել զրույց <<Ովածխատի նա կուտի>>, <<Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն>>, <<Աշխատասիրությունը հաղթաթուղթ է , իսկ իսկ ծուլությունը՝ արատ>> թեմաներով:

3.6 Բնապահպանական դաստիարակություն- Անցկացնել զրույց բնությունը պահպանելու, խնամելու մասին: Սովորողների մեջ սերմանել սեր դեպի բությունը: Կազմակերպել զրույց <<Բնությունը մի մասնիկը մենք ենք>> թեմայով: Ապահովել աշակերտներ մասնակցությունը շաբաթորյակներին: Մասնակցել ծառատնկմանը, խնամել դպրոցամերձ այգին:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ- Ամրապնդել ծնող-ուսուցիչ կապը: Ե՛վ ծնողի, և՛ ուսուցչի ցանկությունն է, որ երեխան լինի կրթված և դաստիարակված: Համատեղ աշխատանքի շնորհիվ է միայն կարելի հասնել հնարավոր լավ արդյունքի:

Ժամանակին հրավիրել ծնողական ժողովներ և ծնողներին մշտապես մասնակից դարձնել դասարանական միջոցառումներին:

# Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

| Շաբ. | Կատարման ժամկետ | Թեմա | Նպատակ | Կատարող |
|---|---|---|---|---|
| 1 | 06.09.22 | Ես՝ դպրոցում | Քննարկել դասարանային կանոնները աշակերտների հետ՝ դասերի ընթացքում և դասամիջոցներին։ | Դասղեկ |
| 2 | 13.09.22 | Ովքե՞ր են իմ ընկերները։Ի՞նչն եմ կարևորում ընկերության մեջ։ | Դաստիարակել աշակերտների մեջ ընկերություն և ընկերոսիրություն, սեր և հարգանք, զիջողականություն միմյանց նկատմամբ։ | Դասղեկ |
| 3 | 20.09.22 | Անկախություն. մեծագույնարժեք և նվաճում | Ձևավորել քաղաքացիական պատասխանատվություն, արժանապատվություն, հարգանք՝ սեփական երկրի մշակույթի և պատմության հանդեպ։ | Դասղեկ |
| 4 | 27.09.22 | Ուսուցչի դերը մեր կյանքում։Տոնդ շնորհավոր, սիրելի՛ ուսուցիչ։ | Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք ուսուցչի անձի և կատարած գործի նկատմամբ։ | Դասղեկ |
| 5 | 04.10.22 | Թարգմանչաց տոն | Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը։ | Դասղեկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | 11.10.22 | Գրքերի զարմանահրաշ աշխարհում | Հետաքրքրության աճի զարգացում՝ ընթերցանության նկատմամբ։ | Դասղեկ |
| 7 | 18.10.22 | Էթիկա և էսթետիկա. քաղաքավարությա ն կանոններ | Քաղաքավարության կանոնների քննարկում | Դասղեկ |
| 8 | 01.11.22 | Մեր վատ սովորությունները նպայքարը դրանց դեմ։ | Մեծերի օրինակների հիման վրա ցույց տալ վատ սովորությունների օրինակները, դրանց հետևանքները և դրանց դեմ պայքարի ուղիները։ | Դասղեկ |
| 9 | 08.11.22 | Կոնֆլիկտներ ի հաղթահարու մ, հանդուրժողականություն | Աշակերտների մեջ զարգացնել կոնֆլիկտների հաղթահարման հաշտարար, ճիշտ ձևեր։ Լինել հանդուրժող մեկը մյուսի նկատմամբ, փորձել հասկանալ | Դասղեկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | դիմացինին | |
| 10 | 15.11.22 | Ինքդ սովորեցիր,սովորեցրու՛ ընկերոջդ | Զարգացնել գիտելիքներով կիսվելու, սովորածը փոխանցելու համագործակցային կարողությունները | Դասղեկ |
| 11 | 22.11.22 | Աշակերտի իրավունքներն ու պարտականությունները | Մշակել կանոններ՝ դպրոցում իրենց իրավունքների և պարտականությունների մասին։ | Դասղեկ |
| 12 | 29.11.22 | Իմ վախերը և դրանց հաղթահարման հնարներ | Թերապևտիկ հեքիաթների ընթերցում վախերը գիտակցելու և դրանցից ազատվելու նպատակով | Դասղեկ |
| 13 | 06.12.22 | Երկրաշարժը որպես բնական աղետ և ազգային ողբերգություն | Անհրաժեշտ գիտելիքների հաղորդում երկրաշարժից պաշտպանվելու համար, | Դասղեկ |
| 14 | 13.12.22 | Ինչ է պատասխանատվությա ն զգացումը | Զարգացնել սեփական անձի նկատմամբ պատասխանատվության զգացումը | Դասղեկ |
| 15 | 20.12.22 | Տարեմուտի խոհեր. ամանորին ընդառաջ | Ուրախ,ամանորյա իրավիճակի,տրամադրության զարգացում, առաջին կիսամյակի ձեռքբերումների և բացթողումների քննարկում | Դասղեկ |
| 16 | 10.01.23 | Ես կարող եմ…. | Կարողանալ երեխային հավատ ներշնչել սեփական ուժերի նկատմամբ։ | Դասղեկ |
| 17 | 17.01.23 | Մասնագիտությունների մոլորակ | Տեղեկատվության հաղորդում գոյություն ունեցող մասնագիտությունների վերաբերյալ, հակումների բացահայտում | Դասղեկ |
| 18 | 24.01.23 | Շնորհավո՛ր տոնդ, հայո՛ց բանակ | Զարգացնել աշակերտի մեջ անմնացորդ նվիրում և սեր՝ հայրենիքի պաշտպանության հարցում։ | Դասղեկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | 31.01.23 | Օրինապահ հետիոտն | Ճանապարհային երթևեկության կանոնների քննարկում, հիմնական ճանապարհային նշանների հետ ծանոթացում | Դասղեկ |
| 20 | 07.02.23 | Ժամանակը ոսկի է | Ժամանակի արդյունավետ օգտագործման գիտակցության ձևավորում, արագ և ռացիոնալ որոշումներ կայացնելու հմտության ձևավորում մասնավոր իրավիճակների քննարկման միջոցով | Դասղեկ |
| 21 | 14.02.23 | Աշխատանքը գեղեցկացնում է | Զարգացնել սեր, նվիրվածություն և կարևորել ցանկացած բնույթի աշխատանք | Դասղեկ |
| 22 | 21.02.23 | Բնության զարթոնք , կյանքի իմաստավորում | Զարգացնել աշակերտի մեջ սեր դեպի բնությունը: | Դասղեկ |
| 23 | 28.02.23 | Մարտի 8-ը՝ կանանց միջազգային օր | Հարգանքի զգացողության վերհանում | Դասղեկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 24 | 07.03.23 | Կատակում ենք միասին. հումորը մեր կյանքի անբաժան մասն է: | Հումորի նուրբ կուլտուրայի ձևավորում, Զրույց հումորի մասին: Կփորձենք պարզել, թե հումորը երբ կարող է վիրավորել մարդուն, որ թեմաները փակ են հումորի համար | Դասղեկ |
| 25 | 14.03.23 | Համացանց. վտանգներ և առավելություններ | Աշակերտների հետ պարզել, թե ինչ դեր ունի համացանցը մեր կյանքում | Դասղեկ |
| 26 | 21.03.23 | Մեր փոքրիկ բարեկամները | Պարզել երեխաների կարծիքը կենդաբանական այգու մասին: Ձևավորել կենդանիների նկատմամբ հոգ տանելու ցանկություն: Զարգացնել գրագետ բանավիճելու հմտությունները | Դասղեկ |
| 27 | 04.04.23 | Մոր կերպարը. նկարում ենք հարազատ դիմագծերը | Մայրության և գեղեցկության տոնի առթիվ անակնկալ մայրերին: | Դասղեկ |
| 28 | 11.04.23 | Հայաստանը՝ թանգարան բաց երկնքի տակ | Բացահայտել Հայաստանի՝ իբրև տուրիստական երկրի առավելությունները: | Դասղեկ |
| 29 | 18.04.23 | Հիշու՛մ եմ և պահանջու՛մ Եղեռնի զոհերի հիշատակին | Զարգացնել աշակերտի մեջ արդարամտության և պահանջի զգացողություն: | Դասղեկ |
| 30 | 25.04.23 | Առողջ մարմնում առողջ հոգի | Արժևորել սպորտի դերը մեր կյանքում | Դասղեկ |
| 31 | 02.05.23 | Մայիսյան հաղթանակներ | Պայքարի , հաղթանակի և արյան գնով սեփական հողի պաշտպանության վերհանման միոցով աշակերտի մեջ ձևավորել սեր դեպի անպարտելի գաղափարներ: | Դասղեկ |
| 32 | 09.05.23 | Ո՞վ է իմ հերոսը | Հերոսության գաղափարի գիտակցում ազգային | Դասղեկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | հերոսների օրինակների հիման վրա | |
| 33 | 16.05.23 | Մայիսի 28՝ առաջին հանրապետության օր | Վեհի, վսեմի ու հպարտության զգացողություն՝ հայրենիք արտաբերելիս | Դասղեկ |
| 34 | 23.05.23 | Տարեվերջյան ամփոփում | Ցույց տալ յուրաքանչյուրի ձեռքբերումներն ու հաջողությունները՝ տվյալ ուստարվա վերջում։ | Դասղեկ |